

### **5.7. Անտառկուլտուրական աշխատանքներ, անտառային հատումներ և անտառային հրդեհներ**

1999թ. ՀՀ անտառային ֆոնդը, ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տվյալների, կազմել է 367.64 հազ. հեկտար, որի մոտ 77 %-ը ծածկված է անտառներով /ներառյալ 6.24 հազ. հեկտար հատուկ տարածքները, որից 5.92 հազ. հեկտարը՝ անտառածածկ/։ Անտառվերականգնման աշխատանքներ են կատարվել 750.2 հեկտարի վրա, նախորդ տարվա 1284.2 հեկտարի դիմաց, որից անտառի տնկում և ցանքս՝ 360.2 հեկտարի վրա (1998թ. 432 հեկտարի դիմաց), դրանցից 122.5 հեկտարը փշատերև տնկադաշտային մշակաբույսերի տարածքն է։

Անտառի բնական վերաճին օժանդակող միջոցառումներ են կատարվել 410 հեկտարի վրա. ցանկապատվել է 20 հեկտար անտառային տարածք, իսկ 390 հեկտարի վրա իրականացվել է անտառային հողի հանքայնացում։ Անտառկուլտուրաների լրացում և անտառպուրակի խնամք կատարվել է համապատասխանաբար 730 և 584.3 հեկտարի վրա։

Մթերվել է անտառկուլտուրաների 2.6 տոննա սերմ, որի 9.2%-ը բաժին է ընկնում փշատերևավորներին (հիմնականում սոճի՝ 209 կգ), իսկ 90.8%-ը սաղարթավոր և ծառաթփային տեսակներին (հիմնականում պտղահնդավորներ և ընկուզապտղավորներ, համապատասխանաբար՝ 17.5 և 2048.0 կգ)։ Սերմերի մնացորդը հաշվետու ժամանակահատվածի վերջում կազմել է 3.1 տոննա, որից 1.8%-ը բաժին է ընկնում սոճու, իսկ 16.4, 1.5 և 58.9%-ը համապատասխանաբար կաղնու, պտղահնդավորների և ընկուզապտղավորների սերմերին։

Հաշվետու տարում 133.2 հեկտարի վրա մթերված անտառկուլտուրաները փոխադրվել են անտառի շարքը։

Անտառհատումներ են կատարվել 3461 հեկտար տարածքի վրա (1998թ. 2586 հեկտարի դիմաց), որի 78.2%-ը կամ 2706 հեկտարը կազմել են սանիտարական հատումները, մնացածը՝ անտառվերականգնման (65 հեկտար), նոսրացման (306 հեկտար), անցումային (182 հեկտար), լուսավորման և մաքրման (202 հեկտար) հատումներն են։

Իրացվել է օգտագործման համար պիտանի 41.8 հազ. խիտ խոր.մ փայտանյութ (1998թ. 44.5 հազար հեկտարի դիմաց), որի 14.1%-ը կամ 5.9 հազ. խիտ խոր.մ-ը շինափայտ։ Շինափայտի ընդհանուր ծավալի մոտ 9%-ը ստացվել է սանիտարական հատումներից։

1999թ. արձանագրվել է անտառային հրդեհների 15 դեպք նախորդ տարվա 32-ի դիմաց։ Հրդեհներն ընդգրկել են 52.1 հեկտար անտառածածկ տարածք։ Յուրաքանչյուր հրդեհ միջին հաշվով ընդգրկել է 3.5 հեկտար անտառածածկ տարածք (1998թ. 9.5 հեկտարի դիմաց)։ 15 հրդեհների պատճառ է հանդիսացել գյուղատնտեսական հողատեսքերի հրկիզումը (1998թ. 31-ի դիմաց)։ Անտառտնտեսությանն անտառային հրդեհներից պատճառված վնասը կազմել է 711 հազար դրամ նախորդ տարվա 2.6 մլն. դրամի դիմաց։ Այրված և վնասված է 100.0 հազար դրամ արժողությամբ անտառ արմատի վրա։